

«ԺԱՄԱՆԱԿ» ՕՐԱԹԵՐԹ – ՍԵՓՈՎԿԱՆ ԼՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ – ԻՍԹԱՆՊՈՒԼ, 23 ՄԱՐՏ 2005, ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Մելգոնեան Կրթական Հաստատության (ՄԿՀ) շուրջ ստեղծուած տազնապը հետզհետե կը ճիւղաւորուի եւ միշտ իր առաջնահերթ տեղը կը պահէ Սփիւռքի օրակարգին վրայ: Հարցի ամբողջին մէջ, այս շրջանին յատուկ ուշադրութեան առարկայ կը դառնայ Թուրքիոյ Հայոց Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Ա. Արք. Սուրբաֆեանի կողմէ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՅԲԸՄ) դէմ բացուած դատը: Ինչպէս ծանօթ է, այս խնդիրը ծագած է ՅԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան ՄԿՀ-ն փակելու վերաբերեալ որոշումով: Իսկ Պատրիարքական Աթոռը վերջերս Միացեալ Նահանգներու Գալիֆորնիոյ Նահանգին մէջ դատարան դիմեց այս որոշումը կասեցնելու համար, Մելգոնեան Կտակի իրաւունքներու փոխանցման ստորագրի հանգամանքով: Վերջերս Գալիֆորնիոյ մէջ Նախատեսուած դատավարութիւնը յետաձգուեցաւ Ապրիլի ճիշդ սկիզբին, գործը փոխանցուեցաւ Նաեւ դաշնակցային դատարանի:

Մինչ այս փուլին մէջ սպասումը կը շարունակուէր, վերջին օրերուն դարձեալ ուշագրաւ իրադարձութիւններ ապրուեցան ՄԿՀ-ի հարցին շուրջ: Մեր ստացած տեղեկութիւններուն համաձայն, ՄԿՀ-ն փրկելու համար գործի լծուած մելգոնեանցիներ հանդէս եկան հերթական Նախաձեռնութիւններով: Անոնք մտադիր են վերստին դիմելու Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որովհետեւ ունին յաւելեալ պահանջ մը: Մելգոնեանցիներ կը Նախատեսեն, որ Նորին Ամենապատուութիւնը ՅԲԸՄ-ի դէմ դատ մըն ալ բանայ այս անգամ Յունական Կիպրոսի մէջ:

Կը տեղեկացանք, որ վերոյիշեալ դատական հարցին առընչութեամբ երկու հոգիէ բաղկացեալ պատուիրակութիւն մը. մին ԱՄՆ-էն, միւսը Յունաստանէն, անցեալ շաբթու մէջ այցելած են Նիկոսիա եւ ունեցած են խորհրդակցութիւններ տեղացի երեք փաստաբաններու հետ՝ ի ներկայութեան երեք կիպրահայերու: Յետ խորհրդակցութեան՝ որոշուած է խնդրել Նորին Ամենապատուութենէն, որպէսզի Յունական Կիպրոսի մէջ եւս դատարան դիմէ Նոյն պատճառաբանութեամբ, այսինքն Գալիֆորնիոյ ատեաններուն ներկայացուած պատճառներով: Ամերիկայէն եւ Յունաստանէն Նիկոսիա այցելած պատուիրակութիւնը երեկ (22 Մարտ) հրաժեշտ առաւ կղզիէն հանդիպելու համար Ամեն. Ս. Պատրիարք Հօր եւ խնդրելու անոր հաւանութիւնը՝ որպէսզի Յունական Կիպրոսի մէջ եւս դատարան դիմէ ան:

Այս բոլորը անպաշտօն հաղորդումներու հիման վրայ հաղորդուած են, հետեւաբար կ'ընկալուին որոշ վերապահութեամբ: Պատրիարքական Աթոռի աղբիւրները այս խնդրին շուրջ վաղուց կը վարուին մեծ գաղտնապահութեամբ: Շատ սահմանափակ տեղեկութիւն կը հաղորդուի մամուլին, Նոյնիսկ յետաձգեալ դատավարութենէն վերջ հաղորդումներ չկատարուեցան: Այս լռութեան հիման վրայ գուցէ կարելի է ենթադրել, որ Պատրիարքարանի աղբիւրները դարձեալ լուռ պիտի մնան այս Նոր հաղորդումներուն եւ անոնց ենթադրած հաւանական իրադարձութիւններուն կապակցութեամբ: Բայց եւ այնպէս, այստեղ հարցը բնականաբար առաջին հերթին ընդվզումը չէ, այլ այն, որ ի՞նչպէս պիտի ընթանայ Յունական Կիպրոսի նման երկրի մը մէջ դատ բանալու հաւանականութեան վերաբերեալ գործընթացը: Այսպիսի քայլ մը յարմար պիտի նկատուի՞, թէ ոչ: Չանգուածային լրատուութեան միջոցները այս խնդրին կապակցութեամբ հաղորդումներ կը կատարեն ընդհանրապէս միայն բանավեճային մթնոլորտով: Ռամկավար մամուլը սուր քննադատութիւններու թիրախը կը դարձնէ Նորին Ամենապատուութիւնը եւ Պատրիարքարանի աղբիւրները կը փոխադարձէն գրեթէ Նոյն ոճով եւ սկզբունքներով: Յաւալի է, որ նման բանավեճի մը առարկայ դարձած է մեր Աթոռին անունը, սփիւռքեան կարեւոր կրթօճախի մը պաշտպանութեան հարցին մէջ: Բայց, անկախ մամուլին առարկայական լրահոսը չապահովուելուն անխուսափելի հետեւանքն է առկայ պատկերը: Հիմա Նոր հարցադրումներով, արդէն անելի «հետաքրքրական» փուլի մը թեւակոխած է հարցը:

ԻՆՉ Կ'ԸՍԷ ՕԶԻՆԵԱԼ

Մինչ այդ, սոյն տեղեկութիւններուն մասին դիմեցինք «Փրօտիւքասիօ» (Pro Edvcatio) անկախներու միջազգային խմբակի բանբեր՝ Տքթ. Վարդան Օգինեանի կարծիքին: Ծանօթ է, որ այս կազմակերպութիւնը սկիզբէն ի վեր լուրջ զգայնութիւն կը դրսեւորէ ՄԿՅ-ի հանդէպ եւ հանդէս կու գայ ուշագրաւ նախաձեռնութիւններով: Փարիզէն մեր ունեցած հեռաձայնային տեսակցութեան ընթացքին Վարդան Օգինեան հետեւեալ կերպով արտայայտուեցաւ անց ու դարձին մասին.

««Փրօտիւքասիօ» չէ մասնակցած նշուած պատուիրակութեան ու փաստաբաններու եւ այլ անձերու հաւաքական խորհրդակցութեանց: Այդ հանդիպումին կամ հանդիպումներուն եզրակացութեան ալ ձեզմէ տեղեկացանք կարելի է ըսել: Դատերու տեղադրութեան մասին մեր կարծիքը հետեւեալն է:

«ՄԿՅ-ն Յունական Կիպրոսի գերիշխան հողին վրայ կը գտնուի: Զետեւաբար, ըստ միջազգային կանոնադրութեան, որեւէ պաշտօնական դիմում (այսինքն՝ իրականացում, օրէնսդրական կամ դատական) կը ներկայացուի նախ տեղւոյն՝ կիպրական իշխանութիւններուն: Ուստի «Փրօտիւքասիօ», իր ընտրած գործադրի իրաւական եւ օրէնսդրական ուղիով, դիմումը ներկայացուցած է այդ իշխանութիւններուն: Տարդ դատական դիմում չենք ներկայացուցած: Ի դէպ՝ կանոնադրական (փրօտիւքասիօ) հանգրուաններու՝ ուղին է որ ընտրած ենք:

Մեզի համար դժուար է հասկնալ, որ Պոլսոյ Պատրիարքութիւնը ի՞նչու Գալիֆորնիոյ դատարանները դիմած է, Նիւ Եորք հաստատուած ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան դէմ, երբ Մելգոնեան Կտակին մատակարարութեան իրաւակեդրոնն է Նիկոսիա հաստատուած ՄԿՅ-ն: Ըստ ձեր լուրերուն, ներկայիս կ'առաջարկուի Պատրիարքութեան, որ դատ մըն ալ Նիկոսիոյ մէջ բանայ. փորձելով միացնել Գալիֆորնիան Նիկոսիոյ: Առ այդ՝ մեզի համար նոյնպէս դժուար է հասկնալ, թէ Պատրիարքութիւնը ի՞նչու նախ չէ ընտրած գործադրի իրաւական եւ օրէնսդրական ստուգման ուղին ի պաշտպանութիւն ՄԿՅ-ին եւ յերաշխաւորութիւն Մելգոնեան Կտակին օրինական մատակարարութեան: Կը սխալի՞նք արդեօք, եթէ ձեր ուշադրութեան յանձնենք, թէ դատարանական կանոնադրութիւնները փաստաբաններու համար լայն ու երկար շահաւետ շուկայ մը բանալու ընդունակ է: Ո՛չ անպայման փաստաբաններու քաջալերութեամբ: Իսկ օրէնսդրականն ու գործադրի իրաւականը, իրաւագէտ-փաստաբանի օժանդակութեան կարօտ ըլլալով հանդերձ, ստուգիչ եւ ոչ բազմաձախս յատկանիշներ ունին:

Կայ նաեւ այլ պարագայ մը, որ ընդհանուր է մարդկային հակադիր յարաբերութիւններու մէջ: Ի դէպ՝ ՄԿՅ-ն իր առաքելութեան մէջ պահելու առաջադրութիւնը հանրահաւաքներով, ճառերով, յօդուածներով յայտարարողներուն, նոյնիսկ դատարան, դատարան գոռացողներուն միջեւ չէ՞ն գտնուիր արդեօք անձեր, որոնք կը գործեն (ի Կիպրոս, ի Լոս Անճելըս կամ այլուր) ի նպաստ ԶԲԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան 16 Մարտ 2004-ի որոշումին. նոյնինքն ՄԿՅ-ի առաքելութեան եւ Մելգոնեան Կտակին բարոյք մատակարարութեան հակառակ: Անտեղի՞ է յիշեցնել անկեղծ միամիտներուն եւ շրջահայեացներուն, ինչպէս նաեւ ծպտեալ գործակալներուն, թէ «...Արեւուն տակ նոր բան չկայ...»:

Եւ գուցէ, այս Աւագ Շաբթուան օրերուն, ատենն է որ հայկական վարժարան փակող եւ հայերէնը անպէտ հռչակող եկեղեցաշէն անհաւատներու շարքերուն դէմ համարձակաձայն բարբառով եւ առանց ամօթոյ ըսենք՝ «...Եղիցի՛ լոյս Տեառն Աստուծոյ ի վերայ մեր. զգործս ձեռաց մերոց ուղիղ արա՛ ի մեզ Տեր, եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա՛ մեզ»:

ԱՐՁԱԳԱՆԳ

Միւս կողմէ, այսօր Մելգոնեան Կտակի հարցին եւ Ամեն Ս. Պատրիարք Զօր բացած դատին արձագանգ կը հանդիսանայ նաեւ «Զիրորիյէթ»: Թերթի հաղորդումէն կարելի է հետեւցնել, որ բացուած դատին առաջնահերթ նպատակը 150 միլիոն տոլար արժողութեամբ Մելգոնեան ժառանգը ետ առնելն է